

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1) Բնական աշխարհագրության ճյուղերից է.


- 1) հողերի աշխարհագրությունը
- 2) մշակույթի աշխարհագրությունը
- 3) քաղաքական աշխարհագրությունը
- 4) սոցիալական աշխարհագրությունը

2) Երևանի հեռավորությունը Հարավային բևեռից աստիճաններով կլինի.

- 1) $86,5^\circ$
- 2) 120°
- 3) $96,5^\circ$
- 4) 130°

3) Նկար 1.- ում Ը տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որո՞նք են:

- 1) հվ. լ. 60° արլ. է. 60°
- 2) հս. լ. 20° արմ. է. 20°
- 3) հվ. լ. 60° արմ. է. 60°
- 4) հս. լ. 20° արլ. է. 20°



4

Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) պասսատների առաջացումը
- 2) մուսսոնների առաջացումը
- 3) ժամերի տարբերությունը
- 4) երկնքի ամպամածությունը

5

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տարբեր քարտեզներից կազմված գիրքը կոչվում է ատլաս:
- 2) Աշխարհագրական երկայնությունը Երկրի մակերևույթի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտված աստիճաններով:
- 3) Քարտեզում կամ գլոբուսի վրա միջօրեականների և գուգահեռականների հատումից առաջացած ցանցը կոչվում է աստիճանացանց:
- 4) Երկրագնդի առանցքի՝ ուղեծրի հարթության նկատմամբ ունեցած թեքության աստիճանային մեծությունը համապատասխանում է բևեռային շրջագծերի աստիճանային մեծությանը:

6

1 : 7000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 4,2 կմ
- 2) 42 կմ
- 3) 420 կմ
- 4) 4 200 կմ

7

Բնութագրումով որոշել Երկրի շերտը.

Երկրի ամենավերին և ամենաբարակ շերտն է: Այն կազմված է համեմատաբար թեթև ապարներից: Այդ շերտն է.

- 1) Երկրի միջուկը
- 2) ստորին միջնապատյանը
- 3) երկրակեղևը
- 4) վերին միջնապատյանը

8

Նշվածներից ո՞րն աշխարհագրական թաղանթի հատկանիշ չէ.

- 1) վերընթաց գոտիականություն
- 2) ամբողջականություն
- 3) հորիզոնական գոնայականություն
- 4) մածուցիկություն

9

Ի՞նչ գագ է արտագատվում լուսասինթեզի ժամանակ.

- 1) ածխաթթու գագ
- 2) թթվածին
- 3) հելիում
- 4) ազոտ

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթում դժվար է գտնել մի անկյուն, որտեղ չլինեն կենդանի օրգանիզմներ:
- 2) Մակերի տեսակների թիվն անցնում է 100 000-ը, իսկ ողնաշարավորներինը՝ 50 000-ը:
- 3) Ամենից շատ բույսեր ու կենդանիներ կան Երկրի մակերևույթի մոտ:
- 4) Կենդանի օրգանիզմների քանակը նվազում է մթնոլորտում՝ ըստ բարձրության, իսկ քարոլորտում և ջրոլորտում՝ ըստ խորության:

11

Որքա՞ն կլինի արեգակնային ճառագայթների անկման անկյան մեծությունը հունիսի 22-ին հս.լ. 50°-ի վրա:

- 1) 26,5°
- 2) 63,5°
- 3) 53,5°
- 4) 47,5°

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 2) Մերձարկտիկական գոտու գետերը հորդանում են ձմռանը:
- 3) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
- 4) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներ ու քարաքոսներ: Ո՞ր բնական զոնան է.

- 1) սառցային
- 2) սավաննա
- 3) տունդրա
- 4) տայգա

14

Ի՞նչ հողեր են տարածվում սավանաների զոնայում:

- 1) սևահողերի
- 2) կարմրագորշ
- 3) դարչնագույն
- 4) կարմրադեղին

15

Ո՞ր լեռնաշղթայի շարունակությունն է տարածվում Անտարկտիդայում.

- 1) Ալպեր
- 2) Ապալաչներ
- 3) Անդեր
- 4) Ատլաս

16

Նշվածներից ո՞ր անապատն է տարածվում Ավստրալիայում:

- 1) Սահարա
- 2) Մեծ ավազային
- 3) Կալահարի
- 4) Տակլա-Մական

17

Նշվածներից ո՞ր ջրվեժն է գտնվում Հարավային Ամերիկայում:

- 1) Իգուասու
- 2) Վիկտորիա
- 3) Նիագարա
- 4) Լիվինգստոնի

18

Ընտրել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|---------------|---|
| ա. Պատագոնիա | 1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ: |
| բ. Բրազիլական | 2. Մարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում: |
| գ. Լա Պլատայի | 3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս: |
| դ. Ամազոնի | 4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը: |

- 1) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 2) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-3, բ-2, գ-4, դ-1

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկյան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
- 2) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:
- 3) Հյուսիսային Ամերիկյան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:
- 4) Հյուսիսային Ամերիկյան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:

20

Նշված գործող հրաբուխներից ո՞րն է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:

- 1) Վեզուվ
- 2) Կամերուն
- 3) Կոտոպախի
- 4) Պոպոկատեպետլ

21

Գոնդվանայի մաս հանդիսացող նշված մայրցամաքներից ո՞րն է համարվում հարաբերականորեն անշարժ:

- 1) Աֆրիկա
- 2) Ավստրալիա
- 3) Անտարկտիդա
- 4) Հարավային Ամերիկա

22

Նշվածներից ո՞ր ծառն է առավել բնորոշ Աֆրիկային:

- 1) Էվկալիպտ
- 2) բաոբաբ
- 3) սեքվոյա
- 4) սեյբա

23

Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:
- 2) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:
- 3) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:
- 4) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:

24


Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձությունն է.

- 1) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 2) Գերմանիայի վերամիավումը
- 3) ԱՄՆ-ի կազմավորումը
- 4) Չեխոսլովակիայի բաժանումը

25

Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.

- 1) մինչև 200 մ
- 2) 200-500 մ
- 3) 500-1000 մ
- 4) 1000-2000 մ



26

Ըստ այս տեսության հեղինակի՝ բնությունը և՛ սահմաններ է դնում, և՛ հնարավորություններ է ստեղծում իր յուրացման համար: Բնության վրա մարդուներգործության եղանակները և հարմարվածությունը բնությանը կախված են տվյալ ժողովրդի ավանդույթներից և ապրելակերպից: Ո՞վ է տեսության հեղինակը:

- 1) Վիդալ դը Լա Բլաշ
- 2) Ռուդոլֆ Չելեն
- 3) Կառլ Հասսոլտներ
- 4) Հելֆորդ Մաքհինդեր

27

Նշվածներից ո՞ր երկիրն է միատարր ազգային կազմի տեսանկյունից:

- 1) Ճապոնիա
- 2) Հնդկաստան
- 3) Ինդոնեզիա
- 4) Ռուսաստան

28

Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար քաղցրահամ ջրի սպառման ծավալով.

- 1) արդյունաբերությունը
- 2) ծառայությունների ոլորտը
- 3) գյուղատնտեսությունը
- 4) տեղեկատվական ոլորտը

29

Համաշխարհային տնտեսության ո՞ր հատվածին է պատկանում ձկնորսությունը:

- 1) առաջնային
- 2) երկրորդային
- 3) երրորդային
- 4) չորրորդային



քարտեզ 1

30

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1–ում նշված է տառով.

- 1) Մեխիկո
- 2) Օտտավա
- 3) Բելմոպան
- 4) Հավանա

31

Ո՞ր ծովն է քարտեզ 1–ում նշված Ա տառով.

- 1) Բաֆինի
- 2) Սարգասյան
- 3) Բոֆորտի
- 4) Կարիբյան

32

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Կլիման բարեխառն խիստ ցամաքային է:
- 2) Խոշոր լճերից են Բալխաշը և Արալյանը:
- 3) Մակերևույթը լիովին հարթավայրային է:
- 4) Խոշոր գետերից են Ամուդարյան և Սիրդարյան:

33

Հարավարևմտյան Ասիայի տարածաշրջանի մեջ ո՞ր թերակղզին է մտնում.

- 1) Հինդուստան
- 2) Արաբական
- 3) Կորեական
- 4) Հնդկաչին

34

Անասնապահության ո՞ր ճյուղի գլխաքանակով է Հնդկաստանն աշխարհում առաջատարներից.

- 1) խոշոր եղջերավոր անասնապահություն
- 2) խոզաբուծություն
- 3) մանր եղջերավոր անասնապահություն
- 4) ձիաբուծություն

35

Աֆրիկայում գտնվող պետություններից որո՞նք են միապետություններ:

- 1) Լիբիան և Անգոլան
- 2) Եթովպիան և Գանան
- 3) Լեսոտոն և Մարոկկոն
- 4) Քենիան և Նիգերիան

36

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Լայն տարածում ունեն մերինոս ցեղատեսակի ոչխարները:
- 2) Աշխարհում առաջատարներից է այլումինի հումքի՝ բոքսիտների արյունահանմամբ և արտահանմամբ:
- 3) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:
- 4) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:

37

ԱՄՆ-ի «օգտակար հանածո — հանքավայր» զույգերից ընտրել սխալը.

- 1) քարածուխ — Ապալաչներ
- 2) նավթ — Կալիֆոռնիա
- 3) երկաթ — Մեքսիկական ծոց
- 4) պղինձ — Ժայռոտ լեռներ

38

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՌԴ բնակչության տեղաբաշխումը խիստ հավասարաչափ է:
- 2) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:
- 3) Ըստ պետական կարգի՝ նախագահական դաշնային հանրապետություն է:
- 4) ՌԴ-ում գերակշռող կրոնական ուղղությունն է լամայականությունը:

39

Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:
- 2) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 3) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:
- 4) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է Սառցե երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է գեյզերներով: Երկրաջերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և ջերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Իռլանդիան
- 2) Ֆինլանդիան
- 3) Իսլանդիան
- 4) Նորվեգիան

41


Ո՞ր լեռնաշղթան է եզերում Վանա լիճը հարավից:

- 1) Հայկական Տավրոս
- 2) Ծաղկանց
- 3) Հայկական պար
- 4) Ծաղկավետ

42

Նշվածներից ո՞րն է Մռավի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթը.

- 1) Դիզափայտ
- 2) Ծարասար
- 3) Գոմշասար
- 4) Մեծ Քիրս



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Փամբակի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

44

Քարտեզ 2–ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տառով է նշված.

- 1) Ջ
- 2) Ե
- 3) Է
- 4) Ը

45

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:
- 2) Քաջարան և Ախթալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:
- 3) Մեծամորը և Ծաղկաձորը միագործառության քաղաքներ են:
- 4) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց:

46

ՀՀ ո՞ր քաղաքն ունի առողջարանային նշանակություն.

- 1) Մասիսը
- 2) Ջերմուկը
- 3) Գավառը
- 4) Վարդենիսը

47

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 2) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:
- 3) ՀՀ–ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է:
- 4) ՀՀ–ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:

48

Երկաթուղային կայարաններ են.

- 1) Գորիսը և Միսիանը
- 2) Մարալիկը և Արթիկը
- 3) Գավառը և Մարտունին
- 4) Վայքը և Եղեգնաձորը

49

Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ցածրադիր գոտու ռոտգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:
- 2) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:
- 3) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:

50

Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) քիմիական արդյունաբերությունը
- 2) ալյումինաձուլությունը
- 3) պանրի արտադրությունը
- 4) պղնձաձուլությունը

51

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 2) Ջերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 3) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 4) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:

52

Նշվածներից ո՞րը չի համարվում մթնոլորտն աղտոտող աղբյուր:

- 1) ավտոտրանսպորտը
- 2) ջերմաէլեկտրակայանները
- 3) թռչնաբուծական ֆերմաները
- 4) բնության հատուկ պահպանվող տարածքները

53

Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.

- 1) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
- 2) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
- 3) «հումքային ռեսուրսներ-արտադրություն-սպառում-երկրորդային հումքային ռեսուրսներ» շղթայի ներդրումը
- 4) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակի

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անտառապատ տարածքների կրճատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:
- 2) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օղակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:
- 3) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:
- 4) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումն ու վերահսկումն է:

55

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պարենային համամոլորակային հիմնախնդիրը համամոլորակային հիմնախնդիրներից ամենահինն է:
- 2) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:
- 3) Զարգացող երկրների միայն չնչին մասում է պարենամթերքի արտադրության աճը հետ մնում բնակչության աճի տեմպերից:
- 4) Սովյալների և թերսնվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:

56

Գրել այն գետերի համարները, որոնք հոսում են Աֆրիկայում.

- | | |
|------------|------------|
| 1) Ենիսեյ | 5) Կոնգո |
| 2) Նեղոս | 6) Մուրեյ |
| 3) Օրինոկո | 7) Օրանժ |
| 4) Շարի | 8) Հոնոսու |

57

Գրել այն երկրների համարները, որոնք ունեն զարգացած շերամապահություն.

- | | |
|-------------|----------------------------|
| 1) Չինաստան | 5) Հնդկաստան |
| 2) Եգիպտոս | 6) Կորեայի Հանրապետություն |
| 3) Բոլիվիա | 7) Խորվաթիա |
| 4) Շվեդիա | 8) Իսլանդիա |

58

Գրել այն ազգերի համարները, որոնց ներկայացուցիչների թիվն անցնում է 100 մլն-ը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1) բենգալացիներ | 5) բիհարցիներ |
| 2) պարսիկներ | 6) հույներ |
| 3) հրեաներ | 7) վրացիներ |
| 4) փենջափցիներ | 8) բրազիլացիներ |

59

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ձիթենու մշակությամբ:

- | | |
|--------------|----------------------------|
| 1) Վրաստան | 5) Իսպանիա |
| 2) Հունաստան | 6) Կորեայի Հանրապետություն |
| 3) Բոլիվիա | 7) Իտալիա |
| 4) Շվեդիա | 8) Իսլանդիա |

60

Գրել ՀՀ այն քաղաքների համարները, որոնք գտնվում են Արփա գետի ավազանում.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ջերմուկ | 5) Եղեգնաձոր |
| 2) Դաստակերտ | 6) Վայք |
| 3) Մարտունի | 7) Վեդի |
| 4) Վարդենիս | 8) Սիսիան |

61

Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք Որոտանի ավազանում են:

- | | |
|-------------|----------------|
| 1) Կեչուտի | 5) Ձորագետի |
| 2) Քանաքեռի | 6) Տաթևի |
| 3) Մեծամորի | 7) Շամբի |
| 4) Արզնիի | 8) Սպանդարյանի |

62

Տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց ջրառատության աճման կարգի.

- 1) Հոենու
- 2) Կոնգո
- 3) Ամազոն

63

Տրված անապատների համարները դասավորել ըստ դրանց մակերեսի աճման կարգի.

- 1) Ատակամա
- 2) Սահարա
- 3) Մեծ Վիկտորիա

64

Լոնդոնում ժամը 10-ն է, Այդ պահին ժամը քանի՞ սը կլինի Մոսկվայում (Երբորդ ժամային գոտի):

65

Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին:

(66-67) Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ:

66

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67

Որոշել բնական աճի գործակիցը (%):

68

Երկրի բնական գազի պաշարները կազմում են 6,9 մլրդ խմ, տարեկան հանույթը՝ 230 մլն խմ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:

Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 2) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 4) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
- 5) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
- 6) Արտահաման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:

ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Թռչնաբուծական ֆարմիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 2) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 3) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
- 4) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված:
- 5) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը:
- 6) Խոզաբուծությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: